

Հաբուած: Գեկտեմբերի 7-ին 1905 թիւ: Գանձակ քաղաքում:

Պըստաւ Դ—մասի Կետարէդ աւանի՝ Շեպիլո.

(Եարունակելի)

Քաջբերունի.

ԲԱՅ ՆԱՄԱԿԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Եմ երեք տարուայ գործակալութեան միջոցին և մի քանի ուրիշ պատճառներով ես առիթ եմ ունեցել դիտելու, որ գիւղական քահանաները իրենց կատարած օրինակատարութիւններն արձանագրելիս մի քանի բաներում կամաւ թէ ակամայ զանցառու են լինում: Սրանից առաջանո՞մ են որոշ անձտութիւններ, որով նախ խոշոր թիւրիմացութիւնների առիթ են գառնում կոնսիստորիաներում և երկրորդ չափարերական մատեանները իրենց իսկական նպատակին չեն կարողութում ծառայել:

Նախ արտակ կոչուող մեծ չափարերական մատեանների նշանակութիւնը, որ բաժանուած են ըոլոր եկեղեցիներին 1901 թուականին, պարզ չի դիտակցւում շատերի կողմից: Այդ մատեանների պաշտօնական նշանակութիւնը շատ քիչ չափով յայտնի է ամենքին, բայց այդ մատեանները պաշտօնականից բացի ունեն ելի մի ուրիշ կարեռը ստատիստիկան-ժողովրդագրական տեղեկագրական նշանակութիւն: Եթէ այդ մատեանները պահուեն ամենայն ճշտութեամբ, նրանք կը դառնան սահմադ իրականութեան ճշդրիտ հայելին: Անցնցելի կերպով կը տարառուեն նրանց մէջ գիւղական կեանքի եկեղեցու և նրա պաշտօնեաների հետ կապ ունեցող ըոլոր երկոյթները: Ժամանակ կանցնի, գուցէ մեր գիւղերի գտան իրականութիւնը իրենով հետաքրքրութեանը կունենայ, որոնք իրենց գիւտութիւնով կամ կարողութիւնով գիւղերին օգնելու տրամադրութիւնով կը մատեան նրանց: Այդ, այդ ժամանակ լանտմքով և ճշտութեամբ գրուած մեր եկեղեցիների նախարարակները թանկադին ծառայութիւն կանեն: Այդ մատեաններին նայելով գիւղար չի լինի իմանալ երբ, ի՞նչ պատճառներից, այս կամ այն գիւղում ժողովուրդը անել կամ պակասել է, տարուայ որ ամիսներում ծնունդը կամ մահը շատ է եղել տարուայ եղանակները ի՞նչ ազդեցութիւն են ունենաւմ մարդկանց հասակների վրայ և առհաստրակ այս կամ այն գիւղի ժողովրդի առողջութիւնը և երկարակեցութիւնը տարիների ընթացքում ի՞նչ տատանումներ է ցոյց տալիս: Եթէ այս տեղեկութիւն-

ների հետ զուգագրութենաւե եղանակի վոլովսութիւնները տառքիների ընթացքում, կենսական անհրաժեշտ մթերքների գների բարձրանալը և իջնելը, բնութեան և քաղաքակրթութեան գանգան տուեալների ել և էջերը, որպիսի՞ թանկագին և մեր գիւղական համայնքների ապագայի համար օգտակար եղանակաց ցուցակական համայնքների կարելի է հանել: Օրինակ. մանուկ հասակի (մինչեւ մի տարեկանը) հիւանդութիւնների և այդ հիւանդութիւնների արած կատորածի շատ կամ քիչ չափը՝ ժողովրդի մեջ զոյութիւն ունեցող առողջապահական պայմանների և ուրեմն քաղաքակրթութեան չափի նշան է համարւում. ուրեմն ժողովրդական հեանքով հետոքքքրուողը՝ թերթելով նախարարել մատեանները և աչքի անցնելով մեռնազների հասակը, (եթէ մանուկների համար նշանակուած է նրանց քանի ամսական, կամ քանի օրական լինելը) ճիշտ գաղափար կը կազմի այս կամ այն գիւղի յառաջադիմութեան կամ յետադիմութեան մասին: Խոկ առանց մի ժաղովուրդ հիմնաւորապէս ճանաչելու նրան օգնել անկարելի է: Մեծ կարեւորութիւն ունի իմանալ թէ տարուայ որ ժամանակը ինչ հիւանդութիւններ են մահ պատճառում, ուրեմն բացի մահուան ժամանակը ճիշտ նշանակելուց, պէտք է հսար եղած չափով ճիշտ նշանակուի, թէ մահը լինչ հիւանդութիւնից է առաջացել: Նատերի համար գժուար կը լինի հիւանդութիւնների բժշկական անունը տալ բայց այդ այնքան էլ կարեւոր չէ. կարելի է հիւանդութիւնը նշանակել տեղական անուններով, (մայասուլ, ուռուցւորութիւն, գեղնացաւ, զարամուխ, ճլերը և այլն) յետոյ ճիշտ կը լինի ստուգել, թէ որ հիւանդութիւնը բժշկութեան մեջ ինչպէս է կոչւում: Քահանայի համար այդ հեշտ է. անշուշտ գուք գնում էք հիւանդին հաղորդելու, մի երկու խոօքով սփոփել նրան նայնպէս ձեր պարտքն է. գժուար չէ այդ ժամանակ հարցու փորձ անել հիւանդութեան մասին և գոնէ, գժուար գէպքերում, նշանակել՝ թէ մեռնողը հիւանդ ժամանակ դլխաւորապէս լինչից էր նեղանում: Այն գէպքերում, երբ հիւանդը բժշկուում է աւելի անստոյդ, կարելի է նշանակել մահուան պատճառը: Հետաքրքիր է իմաստ, թէ տարուայ ընթացքում քանի տարաբաղդ գէպքեր են պատահում. ուստի առանց խսուափելու պէտք է նշանակել մահուան իսկական պատճառը (խեղզուեց ջրում, այրուեց, սպանուեց, վայր ընկաւ և այլն):

Պէտք է լու հասկանանք, որ ոչ մի օրինակատարութիւն վաւերական չի, եթէ արձանագրուած նախարարակ մատեան չունի և կատարող քահանայի ստորագրութեամբ հաստատուած չէ: Մկրտութեան, պատկի, թաղժան համար՝ կոնսիս-

տուրիայից վկայական պահանջող բազմաթիւ խնդիրները շատ անգամ երգմնական քննութիւնների և պէս պէս անախորժ բարդութիւնների պատճառ են լինում միայն քահանայի անփութութեան պատճառով. այն ինչ իւր ժամանակին եղած մի փոքր պարտաճանաչութիւնը այս ամենը կը վերացնէք:

Նատ անգամ, երբ զանազան գիւղերում խօսք է բացուել նախարարակ մատեանը պահելու այս կամ այն թերութեան մասին, քահանաներից շատերը պատճառաբանել են, թէ իրենց չի հասկացրած մի քանի հորցերի կարեռութիւնը. Այդ տիսու հանգամանքն աչքի առաջ ունենալով՝ այս յօդուածով իմ ընկերական պարագն եմ վճարում իմ պաշտօնակիցներին:

Որպէս զի այս ամեն թերութիւնները վերանան, մանաւանդ որ այդ մեր պաշտօնի էական պարտաւորութիւնն է և օրէնքով էլ մեզնից պէարէ պահանջուի, կարեռ եմ համարում խորհուրդ տալ, որ նախարարակ և կոնսիստորիայից ուղարկուած մի տարուայ չափաբերական մատեանը անպատճառ պահանակն իկեղեցաւմ, (և եթէ հնարաւոր է այդ նպատակից շնուրած դաշակաւոր սեղանի վրայ). այնտեղ լինի գրեւ, թանաք և ծծող թուղթ: Քահանաներից որն էլ կատարելու լինի որ և է օրինակատարութիւն, կատարելուց անմիջապէս յետոյ արձանագրի կատարածը թէ նախարարակի, և թէ չափաբերական մատեանի մէջ միաժամանակ պատասխանելով այն բոլոր հարցերին ամեն այն ճշտութեամբ, որսնք նշանակուած են վերնագրերում և իս ստորագրութեամբ վաւերացնելուց յետոյ միայն թողնի եկեղեցին: Զէ՞ որ բոլոր օրինակատարութիւնները կապ ունեն եկեղեցու հետ:

Այսպիսով տարուայ վերջը թէ նախարարակ և թէ չափաբերական մատեանը ըստ ամենայնի պատրաստ կը լինեն և, որ ամենագլխաւորն է, նրանք կը լինեն իրականութեան ամենաստոյգ պատկերը:

Մէ քանի դէպքեր աչքի առաջ ունենալով՝ կարեռ եմ համարում յայտնել, որ նախարարակ մատեանը իսկականն է իսկ տարէ ցտարի կոնսիստորիա ուղարկուող չափաբերական մատեանը նրա պատճէնը, իսկ պատճէնը վաւերական է, երբ բառացի նման է իսկականին:

Յուսով եմ, որ այս ցուցմունքները մի փոքրիկ ժառանյութիւն կանեն իմ գիւղական պաշտօնակիցներին, և եթէ իրականութիւնը ցոյց տայ, որ օրինակատարութիւնները արձանագրելիս քահանաները աչքի առաջ ունեն իմ ցուցմունքները ևս ինձ լիովին վարձատրուած կը համարեմ:

Աւծ նահրիար:

Ամբաւ Բահանայ Սարգսեանց.